ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

1 օգոստոսի 2024 թվականի N 1195-Ա

«ՎՅԱՉԵՍԼԱՎ ԿՐԻՎՍՈՒՆՈՎ ՎԼԱԴԻՄԻՐԻ» ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՋԸ «ԷԿՈՍ» ԱՋԱՏ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՏՈՒ ՇԱՀԱԳՈՐԾՈՂՆԵՐԻ ՌԵԵՍՏՐՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Ազատ տնտեսական գոտիների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի հունիսի 6-ի N 727-Ն որոշման N 3 հավելվածի 7-րդ կետի 5-րդ ենթակետը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Ներառել «ՎՅԱՉԵՍԼԱՎ ԿՐԻՎՍՈՒՆՈՎ ՎԼԱԴԻՄԻՐԻ» անհատ ձեռնարկատիրոջը (գրանցման համար՝ 264.1223376) «ԷԿՈՍ» ազատ տնտեսական գոտու շահագործողների ռեեստրում (այսուհետ՝ շահագործողների ռեեստր) բարձր և տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում գործունեության, մասնավորապես՝ բջջային և համակարգչային տեսախաղերի մշակման համար:

2. Շահագործողների ռեեստրում ներառված լինելու ժամկետը սահմանել 5 տարի:

3. Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարին՝

1) Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի հունիսի 6-ի N 727-Ն որոշմամբ հաստատված կարգով «ՎՅԱՉԵՍԼԱՎ ԿՐԻՎՍՈՒՆՈՎ ՎԼԱԴԻՄԻՐԻ» անհատ ձեռնարկատիրոջ և «ԷԿՈՍ» փակ բաժնետիրական ընկերության միջև պայմանագիրը կնքվելու դեպքում՝ վերջինիս պատճենն ստանալուց հետո 2 աշխատանքային օրվա ընթացքում «ՎՅԱՉԵՍԼԱՎ ԿՐԻՎՍՈՒՆՈՎ ՎԼԱԴԻՄԻՐԻ» անհատ ձեռնարկատիրոջը տրամադրել շահագործողների ռեեստրում ներառվելու վկայական.

2) «ՎՅԱՉԵՍԼԱՎ ԿՐԻՎՍՈՒՆՈՎ ՎԼԱԴԻՄԻՐԻ» անհատ ձեռնարկատիրոջը վկայականը տրամադրելուց հետո վերջինիս պատճենը 1 աշխատանքային օրվա ընթացքում տրամադրել Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Երևան

01.08.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ